



ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ARMENAKAN PARTY

ПАРТИЯ АРМЕНАКАН

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19ա, Հեռ. +374 77 00 31 50, Էլ-փոստ info@armenakan.am

« 23 » Ապրիլ 2021 թ.

ԱՐՄԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 106-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

106 տարի առաջ վերջնական արարին մոտեցավ Օսմանյան կայսրության մեջ ծրագրված և գործադրված Հայոց Ցեղասպանությունը: Դեռևս մինչև 1915 թվականի ապրիլի 24-ը Օսմանյան կայսրության տարածքում սկսվել ու շարունակվում էր Հայոց Ցեղասպանությունը:

Երիտթուրքական հեղաշրջմամբ և երիտթուրք պարագլուխների կողմից նախապես կազմված Հայոց Ցեղասպանությունը մոտեցավ իր իրագործման վերջնական հատվածին, որի սկիզբը ապրիլին հայ մտավորականության ձերբակալությունն ու գլխատումն էր:

106 տարի առաջ մեր ազգը կանգնեց իրական ֆիզիկական ոչնչացման իրական վտանգի առաջ, սակայն, սիրելի՛ հայրենակիցներ, մեր ազգի տոկունության և ապրելու կամքի շնորհիվ մենք կարողացանք վերածննդի ուղին բռնել, և ի վերջո ձեռք բերել անկախություն և կերտել անկախ պետականություն:

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայոց Ցեղասպանությունը չի՛ ավարտվել, քանզի թուրքական աշխարհը դեռ չի՛ լուծել իր հիմնարար խնդիրները, իսկ այդ խնդիրների հիմնական թիրախը դարձյալ Հայաստանն է և հայ ժողովուրդը:

Արցախյան Երկրորդ պատերազմը ապացուցեց, որ թուրքը դարձյալ նպատակադիր է ցեղասպանել հայ ժողովրդին, ազատվել Հայաստան պետությունից, որը դարձել է սեպ թուրքական աշխարհի սրտում:

Սիրելի՛ հայրենակիցներ, մենք կրկին ոչնչացման վտանգի առաջ ենք կանգնած, ուստի՛ խոնարհվելով մեր անմեղ նահատակների հիշատակի առաջ, պարտավոր ենք թոթափել ներքին թշնամիների լուծը, պաշտպանել մեր Հայրենիքը, գնալ ռազմական մարզանքների և պատրաստվել մեր Հայրենիքի պաշտպանությանը:

Սիրելի՛ ընկերներ, մենք դարձյալ կանգնած ենք մեծ պատերազմների և մեծ փոփոխությունների նախաշեմին, ուստի՛ «**զենք և զինավարժություն**», սա՛ է մեր գոյության երաշխիքն այս օրերին:

Մենք լիահույս ենք, որ կկարողանանք վերակազմակերպվել և ապահովել մեր Հայրենիքի անվտանգությունը, հանուն մեր նախահայրերի, նահատակ եղբայրների հիշատակի:

ԱՐՄԵՆԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ